7. Симонян А.А., Симонян Р.А., Маргарян А.С., Симонян Л.А. и др. Регулирующий эффект SkQ1 в активности АТФазы в митохондриях органов белых крыс при пентилентетразол-индукционных эпилептиформных судорогах. Сборник научных статей ГГУ, 2014, т. 1, с. 44-53.
8. Скулачев В.П. Энергетика биологических мембран. М., 1989.
9. Grinius L.L., Jasaitis A.A., Kadziaus kas Yu.L., Liberman E.A., Skulachev V.P., Topali V.P., Tsosina L.M., Vladimirova M.A. Conversion of biomembrane-produced energy into electric form. 1. Submitochondrial particles. Biochem. Biophys. Acta, 1970, vol. 216, p. 1-12.
10. James A.M., Cocheme H.M., Smith R.A. and Murphy M.P. Interactions of mitochondria-targeted and untargeted ubiquinones with the mitochondrial respiratory chain and reactive oxygen species, implications for the use of exogenous ubiquinones as therapies and experimental tools. J. Biol. Chem., 2005, vol. 28, p. 21295-21312.
11. Liberman E.A., Topali V.P., Tsosina L.M., Jasaitis A.A., Skulachev V.P. Mechanism of coupling of oxidative phosphorylation and the membrane potential of mitochondria. Nature, 1969, vol. 222, p. 1076-1078.

12. Lowry O.H., Lopez J.A. Determination of inorganic phosphate in the presence of labelling ester. *J. Biol. Chem.*, 1946, vol. 162, p. 421.
13. Lowry O.H., Rosebrough N.J., Farr A.L., Randall R.J. Protein measurement with the folin-phenol reagent. *J. Biol. Chem.*, 1951, vol. 193, p. 265-275.
14. Murphy M.P.S., Smith R.A. Targeting antioxidants to mitochondria by conjugation to lipophilic cations. *Ann. Rev. Pharmacol. Toxicol.*, 2007, vol. 47, p. 629-656.
15. Racine R.J. Modification of seizure activity by electrical stimulation. II Motor seizures. *Electroencephal. Clin. Neurophysiol.*, 1972, vol. 32, p. 281-294.
16. Severin S.E., Skulachev V.P., Yaguzinsky L.A. A possible role of carnitine in transport of fatty acids through the mitochondrial membrane. *Biokhimiya*, 1970, vol. 35, p. 1250-1257.

УДК 614.211-053.2-191-036.22(479.25)

**Վարակիչ հիվանդությունների  
համաձարակաբանական առանձնահատկությունները  
մանկական բազմապրոֆիլ հիվանդանոցի ընդհանուր  
հիվանդացության կառուցվածքում**

**Կ.Ս.Քոչարյան**

*Ա.Հերացու անվ. ԵՊՀ համաձարակաբանության ամբիոն  
0025, Երևան, Կորյունի փ., 2*

**Բանալի բառեր.** Վարակիչ հիվանդություններ, սուր շնչառական վիրուսային հիվանդություն /ՍՇՎՀ/, աղիքային ինֆեկցիա, սեպսիս, միզուլիների ինֆեկցիա, մենինգիտ

Կախված ծագումից և կլինիկական արտահայտվածությունից ընդունված է պայմանականորեն տարանջատել մանկական հիվանդությունների հետևյալ խմբերը. 1. աճի և զարգացման հիվանդություններ, 2. հիվանդություններ և համախտանիշներ, որոնք պայմանավորված են արտաքին միջավայրի պայմանների նկատմամբ աճող օրգանիզմի հարմարողական հատկությունների խանգարմամբ, 3. մանկական վարակիչ հիվանդություններ [1,3,5]: Դետր է նշել, որ եթե նախկինում մանկական հիվանդացության ընդհանուր կառուցվածքում առաջատարը վարակիչ հիվանդություններն են, այդ թվում մանկական ինֆեկցիաները, ապա անցյալ դարի 70-ական թվականներից գերիշխում են աճի և զարգացման հիվանդությունները, ինչպես նաև հիվանդությունները, որոնք պայմանավորված են մանկական օրգանիզմի կենսաբանական, նաև սոցիալական ադապտացիայի խանգարումներով [2,4,6]: Տարիներ շարունակ մանկական հիվանդացության ընդհանուր կառուցվածքում գերազանցություն է նշչառական համակարգի, մաշկի և ենթամաշկային բջջանքի, նյարդային համակարգի, աչքի հիվանդությունները, վնասվածքները և թունավորումները, որոնք գումարային կազմել են ընդհանուր մանկական ազգաբնակչության հիվանդացության 60-70%-ը: Ինչ վերաբերում է վարակիչ հիվանդությունների կառուցվածքին, ապա պետք է նշել, որ այստեղ առաջատարը սուր շնչառական վիրուսային վարակներն են, որոնք, օրինակ՝ ՈՒ-ում կազմում են մինչև 87%: Դրանց թվում գրիպը կազմում է մոտ 37% [3]:


Մեր աշխատանքի նպատակն էր՝ ուսումնասիրել վարակիչ հիվանդությունների մասնաբաժինը մանկական ընդհանուր հիվանդացության կառուցվածքում եռամյա կտրվածքով և դրանց համաձարակաբանական առանձնահատկությունները:

### **Նյութը և մեթոդները**

Հետազոտություններն անցկացվել են Երևանի խոշոր մանկական բազմապրֆիլ ստացիոնարներից մեկի տվյալների հիման վրա, եռամյա կտրվածքով՝ 2013-15 թվականների ընթացքում: Հետազոտության նյութը ծառայել են տվյալ հիվանդանոցի բաժանմունքների տարեկան հաշվետվական ձևերը ընդհանուր հիվանդացության կառուցվածքի վերաբերյալ:

### **Արդյունքները և դրանց քննարկումը**

Ամփոփելով ստացված տվյալները, պետք է նշել, որ հետազոտվող ժամանակահատվածում հիվանդանոցի համապատասխան բաժանմունքներում /կրծքային, թոքային, ալերգաբանական, բոքսային և վերակենդանացման/ բուժօգնություն է ատացել ընդհանուր առմամբ 11306 երեխա, որոնցից 4143-ի մոտ ախտորոշվել է վարակիչ հիվանդություն, այսինքն՝ եռամյա կտրվածքով վարակիչ հիվանդությունները ընդհանուր հիվանդացության կառուցվածքում կազմել են միջինը 36,6% (նկ. 1):




**Նկար 1.** Վարակիչ հիվանդությունների մասնաբաժինը մանկական հիվանդացության ընդհանուր կառուցվածքում

Պետք է նշել, որ տարիների դինամիկայում վարակիչ հիվանդացության մակարդակը հիվանդացության ընդհանուր կառուցվածքում գտնվում է բավականին կայուն ցուցանիշների վրա, արձանագրելով աննշան տատանումներ, այսպես 2013թ.-ին ընդունված 4881 հիվանդից վարակիչ հիվանդություն ախտորոշվել է 1808-ի մոտ (37,0%), 2014 թ.-ին ընդունվել է 4219 երեխա, որոնց շրջանում վարակիչ հիվանդության դեպքերը կազմել են 1563 (37,0%), իսկ 2015թ.-ին բուժօգնություն ստացել է 2206 երեխա, որոնցից 772-ը՝ վարակիչ հիվանդության կապակցությամբ (34,9%), այսինքն՝ եռամյա կտրվածքով վարակիչ հիվանդությունների մասնաբժինը ընդհանուր հիվանդացության կառուցվածքում գտնվում է կայուն բարձր մակարդակի վրա, կազմելով բուժօգնության դիմած երեխաների ավելի քան 1/3-ը: Հետազոտության առաջին երկու տարիների ընթացքում այս ցուցանիշը նույնն է, իսկ 2015-ին նկատվում է նվազում ընդամենը 2,1%-ով, սակայն պետք է նշել նաև, որ 2015-ին գրեթե կրկնակի անգամ նվազել է դիմած երեխաների ընդհանուր թիվը: Անդրադարնալով վարակիչ հիվանդությունների կառուցվածքին, ընդհանուր պատկերը ներկայացնելու նպատակով, դրանք բաշխվեցին ըստ հետևյալ խմբերի՝ շնչուղիների վարակիչ հիվանդություններ, աղիքային ինֆեկցիաներ, միզուղիների ինֆեկցիաներ, սեպսիս և մենինգիտ: Պետք է նշել, որ մեր հետազոտությունների արդյունքում վարակիչ հիվանդացությունը ըստ վերը նշված խմբերի ուներ հետևյալ պատկերը. Առաջին տեղում, ինչպես և ներկայացնում է պաշտոնական վիճակագրությունը, գտնվում են շնչուղիների ինֆեկցիաները՝ 3845 դեպք (92,8%), դրանց հաջորդում են աղիքային ինֆեկցիաները՝ 147 դեպք (3,5%), սեպսիս ախտորոշվել է 79 երեխայի մոտ (1,9%), միզուղիների ինֆեկցիա հայտնաբերվել է 48 դեպքում (1,2%) և 24 երեխայի մոտ ախտորոշվել է մենինգիտ՝ 0,6% (նկ. 2):

Ինչպես պարզ է դառնում ներկայացված տվյալներից, հիվանդացության կառուցվածքում խիստ առաջատար տեղ են զբաղեցնում շնչուղիների վարակիչ հիվանդությունները, 12,9 անգամ գերազանցելով մնացած բոլոր վարակիչ հիվանդություններին:

Անդրադարնալով տարիների դինամիկայում ՍՇՎՀ-ներով հիվանդացությանը, պետք է նշել, որ 2013 թ-ին արձանագրված 1808 վարակիչ հիվանդություններից 1639 եղել են ՍՇՎՀ (90,7%), 2014 թ-ի տվյալների համաձայն, ախտորոշվել է ընդհանուր առմամբ 1563 վարակիչ հիվանդություն, որոնցից 1484 շնչուղիների ինֆեկցիա (94,9%), 2015 թ-ին արձանագրվել է ՍՇՎՀ-ով հիվանդացության 722 դեպք՝ (93,5%): Ինչպես ցույց են տալիս ներկայացված տվյալները, երեք տարվա կտրվածքով նկատվում է շնչուղիների ինֆեկցիաներով մանկական

հիվանդացության աննշան վերելք, այսպես՝ 2013-ի համեմատ 2014-ին 4,5%-ով, իսկ 2015-ին՝ համապատասխանաբար 3,1%-ով:



**Նկար 2.** Վարակիչ հիվանդացության ընդհանուր կառուցվածքը եռամյա կտրվածքով՝ 2013-2015 թ.թ.

Անդրադառնալով տարիների դինամիկայում ՍՇՎՀ-ներով հիվանդացությանը, պետք է նշել, որ 2013 թ.-ին արձանագրված 1808 վարակիչ հիվանդություններից 1639 եղել են ՍՇՎՀ (90,7%), 2014 թ-ի տվյալների համաձայն, ախտորոշվել է ընդհանուր առմամբ 1563 վարակիչ հիվանդություն, որոնցից 1484 շնչուղիների ինֆեկցիա (94,9%), 2015 թ-ին արձանագրվել է ՍՇՎՀ-ով հիվանդացության 722 դեպք՝ (93,5%): Ինչպես ցույց են տալիս ներկայացված տվյալները, երեք տարվա կտրվածքով նկատվում է շնչուղիների ինֆեկցիաներով մանկական հիվանդացության աննշան վերելք, այսպես՝ 2013-ի համեմատ 2014-ին 4,5%-ով, իսկ 2015-ին՝ համապատասխանաբար 3,1%-ով:

Անդրադառնալով աղիքային վարակիչ հիվանդությունների նորոգիական կառուցվածքին և հիվանդացությանը եռամյա կտրվածքով, ստացվում են հետևյալ տվյալները. 2013թ-ին գրանցվել է առավելագույն հիվանդացությունը երեք տարվա կտրվածքով՝ 104 դեպք, որոնցից 92-ը եղել են ոռտավիրուսային Էստերիտ (5,1 %), իսկ 10-ը՝ աղենովիրուսային (0,6 %), 2 դեպքում արձանագրվել է չճշտված էթիոլոգիայի աղիքային ինֆեկցիա (0,1 %), 2014-ին ընդհանուր առմամբ արձանագրվել է 19 աղիքային ինֆեկցիա, որոնցից 9-ը՝ ոռտավիրուսային (0,6 %), 7-ը՝ աղենովիրուսային Էստերիտ (0,5 %), 2 չճշտված

Էթիոլոգիայի աղիքային ինֆեկցիա ( $0,1\%$ ) և 1 դեպքում՝ սալմոնելյոզ ( $0,06\%$ ): 2015-ին արձանագրվել է աղիքային վարակի ընդհանուր առմամբ 24 դեպք, որոնցից 17-ը՝ ոռտավիրուսային ( $2,2\%$ ), իսկ 7-ը՝ աղենովիրուսային էնտերիտների ձևով ( $0,9\%$ ):

Ամփոփելով ստացված տվյալները, ակնառու է դառնում ոռտավիրուսային վարակով հիվանդացության կտրուկ անկումը 2013-ից 2014 թթ., երբ հիվանդացությունը նվազել է  $8,5$  անգամ, 2015թ.-ին կրկին նկատվում է մի փոքր բարձրացում՝ 2014-ի համեմատ  $3,6$  անգամ, սակայն ամեն դեպքում, ի տարբերություն 2013-ի՝ 2015-ին առկա է հիվանդացության նվազեցման միտումը, բայց այս դեպքում արդեն՝  $2,3$  անգամ: Հիվանդացության անկումը անկասկած կապված է 2012 թ-ի վերջից ՀՀ իմունիզացման ազգային ծրագրում ոռտավիրուսային պատվաստանյութի ներդրման հետ: Մինույն ժամանակ պետք է նշել, որ 2015 թ-ին այս ինֆեկցիայով հիվանդացած 17 երեխաներից 13-ը այս կամ այն պատճառով պատվաստում չստացածներն էին ( $76,5\%$ ), ինչը ևս մեկ անգամ ապացուցում է պատվաստանյութի գործնական արդյունավետությունը և անհրաժեշտությունը այս վարակի կանխարգելման տեսակետից, հատկապես հաշվի առնելով այն հանգամանքը, որ ոռտավիրուսային վարակը, բացի դասական ֆեկալ-օռալ մեխանիզմով փոխանցվելուց, կարող է նաև անցնել օդակաթիլային մեխանիզմով, ինչը մեծացնում է դրա ներիփանդանոցային տարածման հավանականությունը և դժվարացնում կանխարգելումը: Աղենովիրուսային էնտերիտով հիվանդացությունը եռամյա կտրվածքով էական տարբերություն չի ունեցել, նույնը վերաբերում է նաև չճշտված էթիոլոգիայի աղիքային ինֆեկցիաներին, որոնցով հիվանդացությունը բավականին ցածր է և առանձնապես մեծ համաձարակարանական վտանգ չի ներկայացնում:

Ինչ վերաբերում է սեպսիսին, ապա այն տարիների դինամիկայում գտնվում է բավականին կայուն մակարդակի վրա, զբաղեցնելով երրորդ տեղը վարակիչ հիվանդություններով հիվանդացության կառուցվածքում: Տարիների դինամիկայում սեպսիսով հիվանդացությունը ուներ հետևյալ պատկերը. 2013-ին արձանագրվել է սեպսիսի  $31$  դեպք ( $1,7\%$ ), 2014-ին՝  $35$  դեպք ( $2,2\%$ ) և 2015 թ-ին ախտորոշվել է  $13$  դեպք՝  $1,7\%$ : Պետք է նշել, որ սեպսիս ախտորոշումը դրվում է հիմնականում կլինիկական նշանների և անուրդակի լաբորատոր տվյալների հիման վրա, բավականին քիչ դեպքերում ստանալով արյան մանրէարանական հետազոտության դրական պատասխան: Մեր կողմից անցկացված ուսումնասիրությունների արդյունքում պարզ դարձավ, որ եռամյա կտրվածքով ախտորոշված  $79$  սեպսիսներից  $միայն 11$  դեպքում է պարզվել էթիոլագիան, ինչը կազմում է կլինիկորեն ախ-

տորոշված սեպսիսների 13,5%-ը: Ընդ որում, պետք է նշել, որ հեմոկուլտուրայի մանրէաբանական հետազոտության արդյունքում հիմնականում անջատվել են ստաֆիլոկոկեր՝ 7 դեպք (63,6%), որոնցից 5-ը *S.epidermidis*, իսկ երկուսը՝ *S.aureus*, այդ թվում մեկ՝ MRSA: Մնացած 4 դեպքերում անջատվել են հետևյալ միկրոօրգանիզմները՝ 2 *Enterobacter* (18,2%), 1 *Serratia* (9,1%) և 1 *E.coli* (9,1%): Ինչպես վկայում են ստացված տվյալները, մանկական սեպսիսի էթիոլոգիայում առաջատարը գրամդրական միկրոֆլորան է, որը գրեթե կրկնակի անգամ գերազանցում է գրամբացասականին, ընդ որում գերակշռում են կուտազարացասական ստաֆիլոկոկերը, ինչը խիստ մտահոգիչ է, հաշվի առնելով այս մանրէի ձևավորվող ազրեսիվ հատկությունները:

Միզուլինների ինֆեկցիանների հաճախականությունը երեխանների շրջանում եռամյա կտրվածքով նույնպես դրսնորում է կայունություն. 2013թ-ին ախտորոշվել է 18 դեպք՝ 1,0%, 2014-ին՝ 19 (1,2%) և 2015-ին՝ 11 դեպք, ինչը կազմել է ընդհանուր վարակիչ հիվանդություններով հիվանդացության 1,4%-ը: Այսինքն՝ երեք տարվա կտրվածքով դիտվում է հիվանդացության աննշան բարձրացում, ընդամենը 0,4%-ով:

Պետք է նշել, որ միզուլինների ինֆեկցիանների հիմնական հարուցիչը, համաձայն մանրէաբանական հետազոտությունների արդյունքների, հանդիսանում է աղիքային ցուպիկը, որն անջատվել է 50 հիվանդներից 41-ի (82,0%) մեջի մանրէաբանական հետազոտության արդյունքում: Սա ևս մեկ անգամ ընդգծում է վերընթաց վարակի գերիշխող նշանակությունը միզուլինների ինֆեկցիանների ժամանակ:

Եվ, վարակիչ հիվանդությունների կառուցվածքում վերջին տեղը գրադեցնում է մենինգիտը, որն եռամյա կտրվածքով ուներ հետևյալ պատկերը. 2013թ.-ին ախտորոշվել է 16 դեպք (0,9%), որոնցից 14-ը բակտերիալ (0,8%), 2-ը՝ վիրուսային (0,1%), 2014-ին արձանագրվել է վիրուսային մենինգիտի 6 դեպք (0,4%), իսկ 2015-ին՝ 2 վիրուսային մենինգիտ (0,3%): Ստացված տվյալները վկայում են բակտերիալ մենինգիտով հիվանդացության նվազեցման վերաբերյալ. Եռամյա կտրվածքով բակտերիալ մենինգիտով հիվանդացությունը հասել է 0-ի, իսկ վիրուսայինը, կարելի է ասել, պահպանում է իր կայուն դիրքերը, նույնիսկ մի փոքր ավելանալով 2013-ի համեմատ: Բակտերիալ մենինգիտով հիվանդացության նվազեցումը կարելի է որակել որպես խիստ դրական միտում և այս առումով պետք է նշել, որ անառարկելի է ՀԻԲ պատվաստանյութի ներդրումը իմունիզացման ազգային ծրագրում:

**Эпидемиологические особенности инфекционных  
заболеваний в структуре общей заболеваемости детской  
многопрофильной больницы**

**К.С. Кочарян**

Цель работы – изучение эпидемиологических особенностей инфекционных заболеваний в структуре общей детской заболеваемости в трехлетней динамике. Исследования проводились в одной из крупнейших детских больниц Еревана в течение 2013-2015 гг. Материалом послужили ежегодные отчетные формы отделений больницы о структуре общей заболеваемости. За исследуемый период в соответствующих отделениях больницы получили лечение в общей сложности 11306 детей, из которых у 4143 (36,6%) были диагностированы инфекционные заболевания. При этом ОРВЗ составили 3845 случаев (92,8%), за которыми следуют 147 случаев кишечных инфекций (3,5%), сепсис был диагностирован у 79 детей (1,9%), инфекция мочевыводящих путей была обнаружена в 48 случаях (1,2%), у 0,6% был выявлен менингит.

**Epidemiological characteristics of infectious diseases in the structure  
of general morbidity of pediatric multidisciplinary hospital**

**K.S.Kocharyan**

The purpose of the study was to reveal the epidemiological features of infectious diseases in the structure of childrens' common morbidity in the three-years' dynamics. The studies were conducted in one of the largest children's hospital in Yerevan during the 2013-15 years' period. As materials served the annual report forms of the departments of the hospital about overall morbidity. During the study period in the relevant departments of the hospital there were treated for a total of 11,306 children, out of which 4143 (36.6%) were diagnosed with infectious diseases. Thus AVRI (acute viral respiratory infections) made 3845 cases (92.8%), followed by 147 cases of intestinal infections (3.5%), sepsis was diagnosed in 79 children (1.9%), urinary tract infection was found in 48 cases (1.2%), in 0.6% of cases it was detected meningitis.

**Գրականություն**

1. Деревянко Н.И., Комлярова Г.А. Этиологическая структура возбудителей воспалительных неспецифических урологических заболеваний и динамика их резистентности к широко применяемым антибиотикам. Урология и нефрология, 1997, 3, с.13-18.

2. Нисевич Н.И., Гаспарян М.О. Инфекционные болезни у детей: достижения и проблемы. Эпидемиология и инфекционные болезни, 2001, 6, с.5-9.
3. Самсыгина Г.А., Дудина Т.А., Чебышева М.В. и соавт. Госпитальные пневмонии у детей: этиология и клинико-морфологические особенности. Педиатрия, 2001, 1, с. 5-8.
4. Фазулянова И.М., Шайхразиева Н.Д. Современные аспекты организации профилактики внутрибольничной инфекции в многопрофильном детском стационаре. Педиатрия, эпидемиология и микробиология, декабрь, 1, 2014.
5. Bryce J., Boschi-Pinto C., Shibuya K, Black R.E. WHO estimates the causes of death in children. Lancet, 2005; 365: 1147-52.
6. Williams B.G., Gouws E., Boschi-Pinto C., Bryce J., Dye C. Estimates of world-wide distribution of child deaths from acute respiratory infections. Lancet Infect. Dis., 2002; 2: 25-32.

УДК 618.1: 579.2

## Մայրական կաթից անջատված կաթնաթթվային բակտերիաների բնութագիրը

**Լ.Վ. Դանիելյան**


*ՀՀ ԳԱԱ «Հայկենսաստեխնոլոգիա» ԳԱԿ  
0056, Երևան, Գյուրջյան փ., 14*

*Բանալի բառեր՝ մայրական կաթ, լակտոբացիներ, աճի արագություն*

Մայրական կաթն իրենից ներկայացնում է բարդ կենսաբանական հեղուկ, որը պարունակում է նորածինների աճին անհրաժեշտ միկրոէլեմենտներ, սպիտակուցներ, ձարպեր, ածխաջրեր, ձարպալույթ վիտամիններ (A, E, K), հանքային էլեմենտներ երկաթ, նատրիում, ֆոսֆոր, ցինկ, նաև A դասի իմունազլորուլիններ, հորմոններ, ֆերմենտներ, իմուն և աճի գործոններ, ինչպես նաև պրոֆիոտիկ բակտերիաներ [3, 4, 6]:

Երկար տարիներ մայրական կաթը համարվում էր ստերիլ և ենթադրվում էր, որ կաթում առկա տարբեր գործոնների ազդեցության տակ նորածինների աղիներում ձևավորվում է նորմալ միկրոֆլորան [1, 3, 4]: Վերջին տարիների հետազոտությունների արդյունքում առաջ է քաշվել հիպոթեզ, որ հղության վերջին եռամսյակում մոր աղիքային միկրոֆիտայից մանրէները ներքին ուղիղով (enteromammary route) անցնում են կրծքագեղձեր և ձևավորում «ժամանակավոր» միկրոֆլորա, որը վերանում է կաթնարտադրության ավարտի հետ (նկ. 1): Այս տեղից կարելի է եզրակացնել, որ հղի կնոց աղիքային միկրոֆլորան ունի ուղղակի ազդեցություն նորածինների առողջության վրա: Կրծքի կաթի բակտերիաները համարվում են առաջիններից, որ գաղութացնում են նորածինների աղեստամոքսային համակարգը կանխելով և կանխարգելելով ախտածին մանրէների աճը, հետևաբար իշեցնում են ինֆեկցիոն հիվանդություններով հիվանդանալու ռիսկը [1, 2, 4, 9]: Կարելի է համարել, որ մայրական կաթի մանրէները նպաստում են աղիների լորձաթաղանթում լիմֆոիդ հյուսվածքի ձևավորմանը, ունեն կանխարգելիչ և հակասերգիկ ազդեցություն [3, 4, 7, 8]: Հետևաբար մայրական կաթից մեկուսացած բակտերիաները կարող են հանդիսանալ որպես թեկնածու պրոբիոտիկներ երեխաների աղեստամոք-

սային համակարգի և հղի կանանց կրծքագեղձերի զաղութացման համար՝ կանխելով մաստիտների առաջացումը [6, 7, 8]:



Նկ. 1. Մայրական կաթից անջատված բակտերիաների ծագումը

Կախված աշխարհագրական դիրքից, բնակլիմայական պայմաններից, կենսակերպից՝ տարբեր երկրների կանանց կրծքի կաթի միկրոֆլորան ներկայացված է բազմաթիվ տեսակների պատկանող լակտոբակտերիաներով [1-5, 8]: Հայաստանաբնակ կանանց մայրական կաթի միկրոֆլորայի ուսումնասիրություններ դեռևս արված չեն:

Տվյալ աշխատանքի խնդիրն է հանդիսացել հայաստանաբնակ կանանց կրծքի կաթից կաթնաթթվային բակտերիաների անջատումը, ուսումնասիրումը և նախնական նույնականացումը:

## Նյութը և մեթոդները

Հետազոտության նյութ են հանդիսացել հայաստանաբնակ 22-28 տարեկան ծննդկանների կաթից անջատված լակտոբակտերիաները (*Lactobacillus sp.* LH25, LH26, LH27, LH28, LH29):

Աշխատանքում օգտագործվել են MRS (Himedia), Nutrient broth standard 1 (Serva), յուղագերծ կաթ, ածխաջրեր,  $H_2O_2$ , օքսիդազային սկավառակներ (Himedia), Gram Staining Set (Ghatran, IIR):

Պահպանելով ասեպտիկայի և անտիսեպտիկայի կանոնները միքանի օրվա ծննդկաններից վերցվել են կաթի նմուշներ և նորացումներով կուլտիվացվել ստերիլ կովի կաթում, սելեկտիվ ագարային

միջավայրերում: Ցանքսերը կատարվել են կաթի բոլոր նոսրացումներից, որպեսզի հնարավոր լինի անջատել այն կուլտուրաները, որոնք քիչ քանակությամբ են ներկայացված մայրական կաթում և ինկուբացվել  $37^{\circ}\text{C}$  պայմաններում: Մարուր կուլտուրաներ ստանալու նպատակով ֆերմենտացված կաթի նմուշներից կատարվել են ցանքսեր սելեկտիվ միջավայրերում: Աճած զաղութներն ըստ իրենց մորֆոլոգիական հատկանիշների մաքրվել են և կրկին անգամ ստուգվել է նրանց կողմից կաթը ֆերմենտացնելու ունակությունը:

Անջատված լակտոբակտերիաները ներկվել են ըստ Գրամի և ուսումնասիրվել լուսային մանրադիտակի տակ:

Կուլտուրաների աճի արագությունը որոշվել է MRS արգանակ-ներում ձոճանակով ջրային բաղնիքում  $37^{\circ}\text{C}$  ջերմաստիճանում՝ օպտիկական խտությունների չափման միջոցով 590 նմ ալիքի երկարության տակ:

Ածխաջրերի յուրացումը ստուգվել է ըստ Բերջիի որոշիչի՝ 19 տարբեր շաքարների կիրառմամբ:

## **Արդյունքները և դրանց քննարկումը**

Հայաստանաբնակ 22-28 տարեկան 10-15 օրյա ծննդկաներից վերցված մայրական կաթի հինգ նմուշների ուսումնասիրության արդյունքում պարզվեց, որ բոլորն էլ ընդունակ են ֆերմենտացնել կաթը, ինչը վկայում է նրանցում կաթնաթթվային բակտերիաների առկայության մասին: Իսկ MRS ազարի վրա արված ցանքսերի արդյունքում առաջացած զաղութների ուսումնասիրությունը ցույց տվեց մորֆոլոգիապես իրարից տարբերվող կուլտուրաների առկայությունը (աղ. 1):

Ինչպես երևում է աղ. 1-ից, ֆերմենտացված կաթերից ազարային միջավայրի վրա արված ցանքսերից առաջացած զաղութները տարբերվում են չափսերով և գունավորմամբ: Գաղութները բաժանվում են 3 հիմնական խմբերի՝ սպիտակ՝ 3 մմ, կարնագույն՝ 1-1.5 մմ և կարնագույն սպիտակ՝ 2-2.5 մմ տրամագծերով: Մանրադիտակային ուսումնասիրությունները ցույց տվեցին հինգ տարբեր ցուպիկային շտամներ: Անջատված կաթնաթթվային բակտերիաները գրամդրական են, օժտված չեն կատալազային և օքսիդազային ակտիվություններով:

*Աղյուսակ 1*

*Մայրական կաթից անջատված կաթնաթթվային բակտերիաների և զաղութների մորֆոլոգիական հատկությունները (ներկումը ըստ Գրամի), կատալազային և օքսիդազային ակտիվությունները*

Ծտամի անվան ումը	Գաղութների մորֆոլոգիան		Բջիջների մորֆոլոգիան		Գրամ	Կատա- լազ	Օքս- իդ
	տեսքը	չափ- սերը	տեսքը	չափսերը			
LH 25	կաթնա- գույն	1.0-1.5 մմ	ցուպիկ կարճ շղթաներ	1.0 x 2.5 մկմ	+	-	-
LH 26							
LH 27	կաթնա- գույն	2.0-2.5 մմ	ցուպիկ	1.0 x 3.0 մկմ	+	-	-
LH 28	սպիտակ	3.0 մմ	ցուպիկ շղթաներ	1.0 x 3.0 մկմ	+	-	-
LH 29	կաթնա- գույն	1.0 մմ	ցուպիկ	0.5 x 1.0 մկմ	+	-	-

Կաթը ֆերմենտացնելու ունակությունները և անջատված շտամ-ների կուլտուրալ հատկանիշները ներկայացված են աղ. 2-ում:

*Աղյուսակ 2*

*Մայրական կաթից անջատված կաթնաթթվային բակտերիաների  
կուլտուրալ հատկությունները*

Ծտամի անվա- նումը	Աճը MRS-ում 37°C- ի տակ		Կաթի ֆերմենտա- ցումը	Աճը մինիմալ միջավայրում
	աերոր	անաերոր		
LH 25	++	+++	+++	-
LH 26	+++	+++	++	-
LH 27	++	++	++	-
LH 28	+++	+++	++	-
LH 29	++	++	++	-

Աղյուսակ 2-ում ներկայացված տվյալները վկայում են այն մասին, որ անջատված կաթնաթթվային բակտերիաների շտամները աճում են աերոր և անաերոր պայմաններում և մոնոկուլտուրայով ֆերմենտացնում են կաթը: Մինիմալ միջավայրի վրա աճի բացակայությունը հաստատում է այն փաստը, որ կաթնաթթվային բակտերիաները պոլիխառտաստրոֆ են և կարիք ունեն մեկ տասնյակից ավելի տարբեր աճի գործոնների՝ վիտամինների, ամինաթթուների և նուկ-լեինաթթուների [10]:


## Աղյուսակ 3

Շտամների կողմից ածխաջրերի յուրացման պրոֆիլը

	ՀԹԾԻ	Կավառման ամպլիտուդ	Կավառման ամպլիտուդ	Կավառման ամպլիտուడ	Կավառման ամպլիտուդ																
L	-	+	+	+	+	+	+	+	+	-	-	-	+	+	+	+	+	-	-	+	
H2	-	+	+	+	+	+	+	+	+	-	-	+	-	+	+	+	+	-	-	+	
5																					
L	+	+	+	+	+	+	+	+	+	-	-	+	-	+	+	+	+	-	-	+	
H2	+	-	+	+	+	+	+	+	-	-	+	+	-	-	-	-	-	+	+	-	
6																					
L	-	-	+	+	+	+	+	+	-	+	+	+	-	-	-	-	+	+	-	-	
H2	-	-	+	+	+	+	+	+	-	-	+	+	-	-	-	-	-	+	+	-	
7																					
L	+	-	+	+	+	+	+	+	+	-	-	+	+	-	-	-	-	+	+	-	
H2	+	-	+	+	+	+	+	+	+	-	-	+	+	-	-	-	-	+	+	-	
8																					
L	+	-	+	+	+	+	+	+	+	-	-	+	+	-	-	-	-	+	+	-	
H2	+	-	+	+	+	+	+	+	+	-	-	+	+	-	-	-	-	+	+	-	
9																					

Աղյուսակ 3-ում ներկայացված է անջատված շտամների կողմից 19 տարբեր ածխաջրերի յուրացումը, որտեղից երևում է, որ այդ կուլտուրաները տարբերվում են միմյանցից շաքարների յուրացման պրոֆիլով: Համաձայն Բերզիի բակտերիաների որոշչիչ՝ անջատված շտամներից երկուսը LH26-ը և LH29-ը պատկանում են *L. casei* sp. *rhamnosus*, LH25-ը՝ *L. casei* sp. *casei*, LH27-ը՝ *L. salivarius*, LH28՝ *L. casei* sp. *plantarium* տեսակներին:

Ուսումնասիրվել է անջատված շտամների աճի օրինաչափությունները MRS միջավայրում ինտենսիվ աերացիայի պայմաններում (նկ. 2):



Նկար 2. Լակտոբակտերիաների աճի օրինաչափությունները MRS  
միջավայրում ինտենսիվ աերացիայի պայմաններում

Նկար 2-ում ներկայացված կորերից երևում է, որ շտամներից երկուսը՝ LH25 և LH26-ը համեմատաբար ավելի լավ են աճում և կուտակում մեծ կենսազանգված:

Այսպիսով, ընդհանրացնելով ստացված արդյունքները, կարելի է ասել, որ մայրական կաթը պարունակում է տարբեր տեսակների պատկանող կուլտիվացվող կաթնաթթվային բակտերիաներ, որոնք կարող են հանդես գալ որպես թեկնածու պրոբիոտիկներ հղի կանանց կրծքագեղձերի և երեխաների աղիների գաղութացման համար [4, 5]:

Поступила 04.05.16

## **Характеристика молочнокислых бактерий, выделенных из материнского молока**

**Л.В. Даниелян**

В последние годы анализы микробного разнообразия грудного молока показали, что грудное молоко является источником живых молочнокислых бактерий, важных для формирования кишечной микрофлоры грудного ребенка.

Целью данного исследования является выделение молочнокислых бактерий из грудного молока. Образцы грудного молока ( $n = 5$ ) были взяты у здоровых женщин в ранний лактационный период. Грудное молоко в 10-кратных разведениях было инокулировано в стерильном обезжиренном коровьем молоке и на агаризованной среде и инкубировано при  $37^{\circ}\text{C}$ . Были выделены лактобациллы, способные ферментировать молоко. На основании изучения морфокультуральных свойств были выделены 5 грамположительных штаммов, хорошо растущих на средах MRS и монокультурой свертывающих молоко.

## **Characterization of lactic acid bacteria isolated from breast milk**

**L.V. Danielyan**

In recent years the analyses of microbial diversity of breast milk have shown that it is the source of alive lactic acid bacteria important for the formation of intestinal microflora of infant.

The aim of this study is the isolation of lactic acid bacteria from breast milk. Samples of breast milk ( $n = 5$ ) were taken from healthy women in the early lactation period. Breast milk in 10-fold dilution was inoculated in sterile skim cow milk and on agar medium incubated at 37 °C. Lactobacilli capable of fermenting milk were isolated. Based on the study of morpho-cultural properties, 5 Gram-positive strains that grew well on MRS media and led to the fermentation of milk by monoculture were isolated.

### Գրականություն

1. *Bhatt V. D., Vaidya Y.H., Kunjadia P.D., Kunjadia A.P.* Isolation and characterization of probiotic bacteria from human milk. *Inter. Journal of pharmaceutical science and health care*, 2012, 2, Vol. 3.
2. *Beasley S.S., Saris P.E.J.* Nisin-producing *Lactococcus lactis* strains isolated from human milk. *Applied and Environment Microbiology*, 2004, 70: 5051–3.
3. *Fernández L., Langa S., Martín V., Maldonado A., Jiménez E., Martín R., Rodríguez J.M.* The human milk microbiota: origin and potential roles in health and disease. *Pharmacol. Res.*, 2013, 69 (1), p. 1-10.
4. *Jeurink P.M., Bergenhenegouwen J., Jimenez E et al.* Human milk: a source of more life than we imagine. *Wageningen Academic Publishers. Beneficial Microbes*, 2013, 4 (1 ): 17-30.
5. *Martin R., Langa S., Reviriego C., Jimenez E., Marin L.M., Xaus J., Fernandez L., Rodriguez J.M.* Human milk is a source of lactic acid bacteria for infant gut. *The Journal of Pediatrics*, 143, 754-758. (2003).
6. *Martín, R., Langa, S., Reviriego et al.* The commensal microflora of human milk: New perspectives for food bacteriotherapy and probiotics. *Trends in Food Science & Technology*, 2003, 15, 121-127.
7. *Olivares M., Diaz-Ropero M.P., Martín R. et al.* Antimicrobial potential of four *Lactobacillus* strains isolated from breast milk. *Journal of Applied Microbiology*; 2006, 101: 72–9.
8. *Perez-Caro F.J., Dong H. and Yaqoob P.* In vitro immunomodulatory activity of *Lactobacillus fermentum* CECT 5716 and *Lactobacillus salivarius* CECT 5713: two probiotic strains isolated from human breast milk. *Immunobiology*, 2010, 215: 996-1004.
9. *Sinkiewicz G., Ijungren L.* Occurrence of *Lactobacillus reuteri* in human breast milk. *Microb. Ecol. Health Dis.*, 2008, 20:122-126.
10. *Van Niel E.W.J., Hahn-Hagerdal B.* Nutrient requirements of lactococci in defined growth media. *Applied Microbiology and Biotechnology*, 1999, 52: 617-627.

УДК 617-089

**Պայմանական-ախտածին միկրոօրգանիզմների  
շրջանառությունը ծննդատանը  
2009-2014թ.թ. ընթացքում**

**Մ.Մ. Տեր-Ստեփանյան**

*Մ. Հերացու անվ. ԵՊՀ համաձարակարանության ամբիոն  
0025, Երևան, Կորյունի փ., 2*

**Բանալի բառեր** հոսպիտալային շտամ, հիվանդանոցի միկրոէկո-  
համակարգ, մանրէաբանական մոնիթորինգ, համա-  
ձարակարանական վերահսկողություն, ոսկեգույն  
ստաֆիլոկոկ, գրամբացասական ցուպիկներ

Ներհիվանդանոցային վարակի դերը ինֆեկցիոն պաթոլոգիայում  
տարիների կտրվածքով չի դրսերում նվազեցման միտում: Վերջինսիս  
պատճառները բազմաթիվ են, սկսած խոշոր բժշկական համալիրների  
ստեղծումից, որտեղ կուտակվում է ցածր անընկալությամբ հիվանդ-  
ների խումբ և վերջացրած ինվազիվ բուժ.ախտորոշիչ միջամտու-  
թյունների թվի կայուն աճով, բարդ բժշկական սարքավորումներով,  
որոնց մանրէազերծումը կապված է մեծ բարդությունների հետ [1,4,10]:  
Արդյունքում ձևավորվում են միկրոօրգանիզմների հոսպիտալային  
շտամներ, որոնք դրսերում են կայունություն հակաբակտերիալ մի-  
շոցների նկատմամբ: Ախտածինների ֆենոտիպային սպեկտրի և  
դրանց գերակշռող համաձարակարանական մարկերների որոշումը  
թույլ է տալիս ժամանակին հայտնաբերել հոսպիտալային շտամները,  
հնարավորություն է ընձեռում որոշել հիվանդների բուժման մոտեցու-  
մը, շտկումներ կատարել կանխարգելիչ միջոցառումների համակար-  
գում [9]: Սա հատկապես վերաբերում է այսպես կոչված ներհիվան-  
դանոցային էկովարներին՝ բակտերիաների տեսակներին, որոնք հար-  
մարված են հիվանդանոցային էկոհամակարգերում գոյատևելու [3]:  
Ճենց այս տեսակները իրենց կենսաբանական հատկությունների շնոր-  
հիվ հարուցում են առավել ծանր ախտաբանական ձևեր, հաճախ  
բերելով բռնկումների: Դրանք բնութագրվում են հակաբիոտիկների,  
ախտահանիչների նկատմամբ բազմակի կայունությամբ, բարձր վիրու-  
լենտությամբ, անտագոնիստական ակտիվությամբ, ներպուղույացիոն

փոփոխականությամբ, գենետիկ նյութի ինտենսիվ փոխանակման հատկությամբ և միզրացիոն ունակություններով [6, 8]: Այսպիսով, առաջատար ներիիվանդանոցային շտամների ուսումնասիրությունը և թարախաբորբոքային ինֆեկցիաների մանրէաբանական մոնիթորինգի կատարելագործումը ծննդօգնության ստացիոնարում հատկապես խիստ արդիական են [5, 7]:

Ենելով վերը նշվածից, աշխատանքի նպատակն էր՝ ուսումնասիրել ծննդատան արտաքին միջավայրի տարրերի գաղութայնացումը պայմանական-ախտածին միկրորգանիզմներով տարիների դինամիկայում՝ 2009-14 թ.թ. ընթացքում:

### **Նյութը և մեթոդները**


Նշված ժամանակահատվածում հիվանդանոցի արտաքին միջավայրի տարրերից, բուժ.անձնակազմի ձեռքերից ու արտահագուստից վերցվել է ընդհանուր առմամբ 9613 լվացուկ՝ մանրէաբանական հետազոտության նպատակով, ընդ որում վերցված լվացուկներից 513-ը վերցվել են բուժ.անձնակազմի ձեռքերից և արտահագուստից, իսկ մնացած 9100-ը՝ միջամտությունների սենյակների, վիրահատարանների և վիրակապարանների արտաքին միջավայրի տարրերի, որոնք կարող են հանդիսանալ վարակի փոխանցման պոտենցիալ գործոններ: Լվացուկները վերցվել են միանվագ օգտագործման մանրէագերծ խծուծներով և ընկրությունում միջավայրով /թիոգլիկոլատ միջավայր կամ Շեղլերի հեղուկ բույսոնային միջավայր/ լցված փորձանորթի մեջ: Փորձանորթները տեղափոխվել են թերմոստատ 37°C-ի պայմաններում 24 ժամ: Այնուհետև կատարվել է ցանքս մանիսուլ աղային, արյունային ազարների և Էնդոյի միջավայրի վրա: Մանրէի տարրերակումից հետո պարտադիր որոշվել է հակաբիոտիկների նկատմամբ զգայունությունը դիսկառարկությունում մեթոդով:

### **Արդյունքները և դրանց քննարկումը**

Անցկացված հետազոտությունների արդյունքում հայտնաբերվեց, որ ընդհանուր առմամբ վերցված 9613 լվացուկից դրական նմուշներ անջատվել են 234 դեպքում (2,4%) (նկ. 1):

Միևնույն ժամանակ պետք է նշել, որ 234 դրական նմուշներում առաջատարը եղել է ոսկեգույն ստաֆիլոկոկը, որն անջատվել է 133 դեպքում (56,8%), իսկ մնացած 101 նմուշից անջատվել են գրամբացասական միկրորգանիզմներ (43,2%), այսինքն ոսկեգույն ստա-

Փիլոկոկի անջատման հաճախականությունը 1,3 անգամ գերազանցել է գրամբացասական միկրոֆլորայի անջատման հաճախականությանը:



**Նկար 1.** Հիվանդանոցի արտաքին միջավայրի ընդհանուր գաղությանացման մակարդակը պայմանական-ախտածին մանրէներով 2009-14 թթ.-ների տվյալների համաձայն

Ինչ վերաբերում է նշված միկրոօրգանիզմների անջատման հաճախականությանը տարիների դինամիկայում, ապա պետք է նշել, որ 2009 թ-ին վերցվել է ընդհանուր առմամբ 865 նմուշ, որոնցից դրական էին 65-ը (7,5%), 2010-ին վերցվել է 1369 լվացուկ, որոնցից 42 դեպքում անջատվել են պայմանական-ախտածին միկրոօրգանիզմներ (3,1%), 2011թ-ին վերցված 1835 նմուշից դրական եղել են 63-ը՝ (3,4%), 2012 թ-ին վերցվել է 1862 լվացուկ, որոնցից դրական եղել են 22-ը (1,2%) 2013 և 2014 թվականներին վերցվել է համապատասխանաբար 1926 և 1756 նմուշ, որոնցից ուսումնասիրվող մանրէների անջատումը կազմել է 25 (1,3%) և 27 դեպք (1,5%) (նկ. 2): Այսինքն, ինչպես ցույց են տալիս ներկայացված տվյալները՝ տարեց տարի հիվանդանոցի արտաքին միջավայրի գաղութայնացման պատկերում դիտվում է պայմանական-ախտածին միկրոօրգանիզմների շրջանառության արտահայտված անկում: Այսպես, եթե 2009 թ-ին արտաքին միջավայրի բաղարկված օբյեկտների թիվը կազմել է 7,5%, ապա արդեն 2010-ին նույն ցուցանիշը կազմել է ընդամենը 3,1%, այսինքն նվազել է 2,4 անգամ, իսկ 2014-ին՝ 1,5%, այսինքն՝ նվազել է 5 անգամ:

Վերը նշվածը կարելի է որակել որպես խիստ դրական միտում, ինչը կապված է կլինիկայում հակահամաձարակային ռեժիմի խստաց-

ման, ախտահանիչ նյութի փոփոխության և նրա նկատմամբ թեստ-միկրոօրգանիզմների զգայունության պարտադիր որոշման և անցկացված միջոցառումների որակի վերահսկման հետ, ինչի մասին անուղղակիորեն վկայում է նաև տարրա ընթացքում վերցված նմուշների քանակի ավելի քան կրկնակի ավելացումը:

Ինչ վերաբերում է առանձին միկրոօրգանիզմների անջատման հաճախականությանը տարիների դինամիկայում, ապա դրանք արտացոլված են Աղյուսակում: Վերլուծելով աղյուսակում ներկայացված տվյալները, պետք է նշել, որ մեր հետազոտությունների առաջին երկու տարիներին հիվանդանոցի միկրոբային պեյզաժում գերակշռում էր ոսկեզույն ստաֆիլոկոկը, որն անջատվել էր համապատասխանաբար 2,7 և 2,5 անգամ ավելի հաճախ, քան գրամբացասական միկրոֆլորայի ներկայացուցիչները, սակայն սկսած 2011թ-ից պատկերը փոխվում է և գերակա դիրքերում հայտնվում է գրամբացասական ֆլորան, մասնավորապես, ակնառու է *Citrobacter*-ի անջատման հաճախացումը, ինչը կապված էր բաժանմունքներում կիրառվող հեղուկ օճառի նշված միկրոօրգանիզմով բաղարկման հետ: Նշված հայտնաբերումը և օճառի մանրէարանական հետազոտության անհրաժեշտությունն առաջացավ այն հանգամանքից հետո, երբ բուժ.անձնակազմի ձեռքերից օճառով լվացվելուց հետո վերցված լվացուկներից անջատվում էր *Citrobacter*-ի միևնույն շտամը, արդյունքում պարզվեց փոխանցման գործոնը և հեղուկ օճառի ամբողջ խմբաքանակը խոտանվեց:


#### Աղյուսակ

#### Անջատված միկրոօրգանիզմների տեսակները տարիների դինամիկայում

Տարեթիվ	Նմուշների քանակը	Գրական նմուշներ /%	<i>S. aureus</i> / գրամ-բացատակ	Անջատված գրամբացասական մանրէների մասնաբաժնը, բաց. թիվ					
				<i>E. coli</i>	<i>Enterobacter</i>	<i>Citrobacter</i>	<i>Proteus</i>	<i>Ps.aeruginosa</i>	<i>Alcaligenes spp.</i>
2009	865	63/7.3	46/17	4	2	9	2	-	-
2010	1369	42/3.1	30/12	5	1	5	-	1	-
2011	1835	60/3.3	24/36	4	6	22	1	-	3
2012	1862	22/1.2	12/10	1	2	7	-	-	-
2013	1926	20/1.0	9/11	4	3	4	-	-	-
2014	1756	27/1.5	12/15	7	3	5	-	-	-

Հաջորդող երեք տարիներին՝ 2012-14 թթ. դիտվում է ոսկեզույն ստաֆիլոկոկի և գրամբացասական միկրոֆլորայի անջատման ան-

նշան տարբերություն: Եվ, եթե վեցամյա կտրվածքով գրամբացասական միկրոֆլորայի անջատման հաճախականությունը ենթարկվել է ոչ այնքան արտահայտված փոփոխության՝ (չհաշված 2011-ի *Citrobacter*-ի անջատման 22 դեպքը)<sup>1</sup> 17 դեպքից, որոնք հայտնաբերվել են 2009-ին, մինչև 15 դեպք, արձանագրված 2014 թ.-ին, ապա ոսկեզույն ստաֆիլոկոկի շրջանառության անկումը խիստ ակնառու է և կրծասվել է 3,8 անգամ, ինչն արդյունք է ստաֆիլոկոկակիրների ակտիվ հայտնաբերման և հետևողական սանացիայի իրականացման, հիմնականում «Նարին-Է» հայրենական արտադրության նրբաքսուկի կիրառմամբ, ինչի արդյունավետությունը ապացուցվել է մեր նախկին աշխատանքներում [2]:



Նկար 2. Պայամանական-ախտածին մանրէների անջատման հաճախականությունը ծննդատան արտաքին միջավայրի տարբերից վեցամյա դինամիկայում

Ինչպես նշվեց վերևում, հիվանդանոցի արտաքին միջավայրի սանիտարահիգիենիկ վիճակի ուսումնասիրությունը ենթադրում էր համաձարակարանական նշանակություն ունեցող տարբեր փոփանցման գործոնների գաղութայնացման ուսումնասիրություն, որոնք միավորվել էին երկու խմբում. առաջին խումբը ներառել է լվացուկներ, վերցված բուժ.անձնակազմի ձեռքերից և արտահագուստից (513 նմուշ), երկրորդը՝ վիրակապարանների, վիրահատարանների և միջամտությունների սենյակների մակերեսներից վերցված նմուշներն էին (9100 նմուշ): Վերլուծելով մանրէաբանական հետազոտություն-

ների արդյունքները, որոնք անցկացվել են առաջին խմբում, հայտնաբերվեց, որ վերցված 513 նմուշից պայմանական-ախտածին մանրէների անջատման առումով դրական էին 14-ը (2,7%), ինչ վերաբերում է երկրորդ խմբին, ապա այստեղ 9100 նմուշից դրական էին 220-ը (2,4%), ինչը 0,3% ավելի քիչ է, քան առաջին խմբի գաղությանացման մակարդակը: Ինչ վերաբերում է յուրաքանչյուր խմբում անջատված միկրոօրգանիզմների տեսակային կազմին, ապա բուժ.անձնակազմի շրջանում ոսկեգույն ստաֆիլոկոկի անջատումը կազմել է 5 դեպք (35,7%), իսկ գրամբացասական ցուպիկներինը՝ 9 (64,3%), հիվանդանոցի արտաքին միջավայրի տարրերից ոսկեգույն ստաֆիլոկոկը անջատվել է 128 դեպքում (58,1%), իսկ գրամբացասական ցուպիկները՝ 92 (41,9%): Ինչպես վկայում են ստացված տվյալները բուժ.անձնակազմի ձեռքբերից և արտահագուստից անջատված մանրէների տեսակային կազմում գերակշռում են գրամբացասական ցուպիկները (1,5 անգամ), ինչը ևս մեկ անգամ ապացուցում է ձեռքբերի և կոնտակտային մեխանիզմի դերը այս խմբի միկրոօրգանիզմների փոխանցման գործում: Բուժ.անձնակազմի ձեռքբերի գաղութայնացման մակարդակի նվազեցման նպատակով մեր կողմից ներդրվել է սպիրուտային հիմքի վրա պատրաստված մաշկային հականեխիչի անհատական կիրառման տարրերակը՝ յուրաքանչյուր բուժ.աշխատողի գրպանում դրա պարտադիր առկայության ձևով, ինչը ենթադրում է ձեռքբերի ախտահանում յուրաքանչյուր միջամտությունից առաջ և հետո:

Այսպիսով, ամփոփելով տիրող իրավիճակը, կարելի է նշել, որ իհարկե, ոսկեգույն ստաֆիլոկոկի շրջանառության հաճախականության անկումը ներկիվանդանոցային պայմաններում խիստ դրական գործոն է, սակայն միևնույն ժամանակ նկատվում է գրամբացասական ֆլորայի կայուն շրջանառություն, ինչը պահանջում է շարունակական մանրէաբանական մոնիթորինգ, ախտահանիչների նկատմամբ շրջանառող միկրոֆլորայի մշտական վերահսկմամբ:

Поступила 06.04.16

## Динамика циркуляции условнопатогенных микроорганизмов в родильном доме с 2009 по 2014 годы

**М.М. Тер-Степанян**

Цель работы – изучение уровня обсемененности объектов внешней среды роддома условнопатогенными микроорганизмами в шестилетней динамике. За указанный период времени с объектов внешней среды больницы было взято 9613 смызов для бактериологического исследования,

среди них положительные образцы были получены в 234 случаях (2,4%). При этом золотистый стафилококк был высеян в 1,3 раза чаще, чем грамотрицательная флора. При сравнении полученных результатов на протяжении шести лет были получены следующие данные: в 2009 г. положительные образцы составили 7,5%, 2010 г. – 3,1%, в 2011г. – 3,4%, в 2012 и 2013 гг. положительными были соответственно 1,2% и 1,3% от исследованных смызов, а в 2014 г. – 1,5%. То есть, как показывают данные, из года в год наблюдается стабильное снижение контаминации объектов внешней среды больницы условнотатогенными микроорганизмами, число положительных образцов на протяжении шести лет снизилось в 5 раз.

### **The dynamics of the circulation of opportunistic pathogens in the maternity home from 2009 to 2014**

**М.М. Тер-Степанян**

The purpose of the study was the assessment of the level of contamination of environmental objects of maternity home by opportunistic pathogens in six years dynamics. During this period from environmental objects of the hospital 9613 swabs were taken for bacteriological examination, in which positive samples were obtained in 234 (2.4%) of cases. At the same time, *Staphylococcus aureus* was separated 1.3 times more frequently than gram-negative flora. When comparing the results obtained during six years, we recorded the following data: in 2009 positive samples made 7.5%, in 2010 – 3.1%, in 2011 – 3.4%, in 2012 and 2013 positive smears made respectively 1.2% and 1.3% of the tested swabs, and in 2014 – 1.5%. As the data show, year by year a noticeable constant decrease in contamination level of environmental objects of hospital by opportunistic pathogens is registered, and the reduction of the number of positive samples for six years has made 5 fold.

### **Գրականություն**

1. Акимкин В.Г. Концептуальная модель организации эпидемиологического надзора за внутрибольничными инфекциями в системе социально-гигиенического мониторинга. Эпидемиология и инфекционные болезни, 2003, 2, с. 11-16.
2. Амбарцумян А.Дз, Тер-Степанян М.М., Барсегян А.А., Меликян А.Р. Эпидемиологическая эффективность различных кремов с антибактериальным действием. Мед. наука Армении НАН РА, 2002, т. XLII, 3, с. 100 – 103.
3. Веткина И.Ф. Современный подход к выбору дезинфицирующих средств в системе профилактики внутрибольничных инфекций (ВБИ). ФАРМиндекс Практик. 2005, вып. 7, с. 13-20.

4. Воробьева В.Н. Распространение внутрибольничных инфекций в России и роль медсестры в их профилактике. Медсестра, 2012, 1, с. 47-53.
5. Горбунов В. А. Сравнительная активность некоторых дезинфектантов в отношении клинических штаммов *P. aeruginosa*, выделенных в стационарах Республики Беларусь. Военная медицина, 2010, 3, с. 46-50.
6. Boyce J.M. Environmental contamination makes an important contribution to hospital infection. *J. Hos. Infect.*, 2007; 65 (suppl 2):50–54.
7. Klevens R.M., Edwards J.R., Richards C.L. et al. Estimating healthcare associated infections and deaths in U.S. hospitals. 2002, *Pub. Health Rep.*, 2007; 122:160–166.
8. Otter J.A., Yezli S., French G.L. The role played by contaminated surfaces in the transmission of nosocomial pathogens. *Infect. Control Hosp. Epidemiol.*, 2011; 32:687–699.
9. Weber D.J., Rutala W.A., Miller M.B., et al. Role of hospital surfaces in the transmission of emerging healthcare-associated pathogens: norovirus, *Clostridium difficile*, and *Acinetobacter* species. *Am. J. Infect. Control*, 2010; 38:S25–S33.
10. Otter J.A., Yezli S., Salkeld J.A.G., French G.L. Evidence that contaminated surfaces contribute to the transmission of hospital pathogens and an overview of strategies to address contaminated surfaces in hospital settings. *Am. J. Infect. Control*, 2013; 41 (suppl 5):S6–S11.

УДК 612.11

## Резистивность сосудистого ложа и регуляция кровообращения

**А.С. Абрамян, А.О. Оганнисян**

*Международный университет «Мхитар Гош»,  
отделение медицины  
0065, Ереван, Себастия, 3 / 7*

**Ключевые слова:** сердце, резистивность, кровообращение, кровяное давление, сосудистая система

Одним из основных механизмов регуляции кровообращения является компенсаторное изменение резистивности сосудистого русла. Очень важный вклад имеет резистивность сосудистого ложа в регуляции кровообращения при изменении объема крови. Это изменение обеспечивает относительное постоянство артериального давления в ответ на функциональные нагрузки. Однако роль резистивных свойств сосудистой системы в регуляции кровообращения в целом окончательно не разрешена.

В настоящее время задачи такого рода решаются с помощью методов математического моделирования [1, 3-6].

Целью данной работы являлось изучение изменения функциональных показателей системы кровообращения в ответ на изменение объема крови при компенсаторном изменении резистивности сосудистого русла.

### Материал и методы

Исследование было проведено на математической модели сердечно-сосудистой системы [6], описывающей взаимосвязь между основными клинически контролируемыми функциональными показателями гемодинамики: артериальным (Ра), венозным (Рв), легочно-артериальным (Рла) и легочно-венозным (Рлев) давлением, кровотоком (q) и объемом циркулирующей крови (ОЦК). Из биофизических отношений этих величин следует, что функциональная нагрузка, приложенная к сердечно-сосудистой системе в виде изменения ОЦК, приводит к направленному изменению функциональных величин (Ра, Рв, Рла, Рлев, q) гемодинамики [2,3].

Изучаемый автономный механизм регуляции кровообращения при комплексном изменении резистивных свойств сосудистой системы

происходит следующим образом. Сигнал изменения артериального давления, зависящего от изменения ОЦК, приводит в гемодинамический центр модели, который в зависимости от рассогласования ( $Pa$ ) от исходного значения ( $Pa^0$ ) корректирует величину гемодинамического сопротивления. Это изменение приводит к компенсации изменения артериального давления, вызванного изменением ОЦК, в результате чего восстанавливается исходное значение  $Pa$ .

Для проведения детального количественного анализа данного автономного регуляторного механизма проводились исследования математической модели с помощью ЭВМ. Это позволило разработать программу, имеющую ряд преимуществ при количественном анализе и интерпретации результатов исследований.

### Результаты и обсуждение

Для оценки роли резистивных свойств в регуляции кровообращения сравнивалась реакция гемодинамики на изменение объема циркулирующей крови при отсутствии регуляции. Такого рода исследования проводились и для выявления вклада насосной функции сердца в регуляцию кровообращения [1].

*Таблица 1  
Числовые значения основных функциональных показателей гемодинамики для «среднего» человека в исходном состоянии и после изменения ОЦК на 5% от исходного значения при отсутствии регуляции*

Показатели	Состояние		
	исходное	после потери 250 мл крови	после переполнения 250 мл крови
Ра, Торр	90	82,5	97,5
Рв, Торр	10	9,1	10,7
Рла, Торр	15	13,7	16,2
Рlv, Торр	10	9,1	10,7
q, мл мин <sup>-1</sup>	4800	4410	5190
Δ ОЦК, мл	0	-250	250

Согласно числовым данным и кривым динамических реакций этих величин, при отсутствии регуляции изменения давления и кровотока определяются соответствующими изменениями объема крови [3].

Если в ответ на адекватные изменения объема крови происходит компенсаторное изменение резистивности периферической функции артериального давления, как было изложено выше, исходное значение  $P_a$  должно восстановиться. Компенсаторное изменение общего периферического сопротивления (ОПС) при этом можно описать по пропорциональному закону регулирования в виде [2]:

$$\text{ОПС} = \text{ОПС}_0 - K_1(P_a - P_a^0), \quad (1)$$

где  $\text{ОПС}_0$  – общее периферическое сопротивление в исходном состоянии,  $P_a^0$  – артериальное давление в исходном состоянии,  $K_1$  – коэффициент регулирования. Из уравнения (1) следует, что коэффициент регулирования показывает изменение сопротивления, компенсирующее одну единицу артериального давления.

Динамическая реакция, сформированная в ответ на изменение ОЦК и компенсаторное изменение ОПС, представлена на рис. 1.

